ԿԱՐԱՊԵՏ ԵՂՅԱՆ ԵՒ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Կարապետ Եղյանը ԺԹ. դարի երկրորդ կեսի եւ հաջորդ դարասկզբի հայ մտաւորականութային եւ հասարակական կյանքի երեւելի դեմքերից է: Նա կարեւորագոյն դերակատարություն է ունեցել արեւելահայ հասարակական-ազգային կյանքում, եղել ազգային-պահպանողական հոսանքի պարագլուխը, Հայոց Եկեղեցու հավատարիմ զավակը[1]: Զբաղեցնելով պետական բարձրագոյն պաշտոններ՝ աշխատել է հնարավորին չափ օգտակար լինել հայ դպրոցական ու եկեղեցական կյանքին: Նշանակալից է նրա դերը հայագիտության զարգացման բնագավառում. հրատարակության է պատրաստել միջնադարյան մի շարք արժեքավոր բնագրեր, լույս ընծայել հիանալի ուսումնասիրություններ: Նրա հետեւողական հոգածության շնորհիվ է, որ տասնյակ երիտասարդ հայեր ուսում են ստացել Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, Դորպատի եւ արտասահմանյան (Բեռլին, Լայպցիգ, Մյունխեն, Ստրասբուրգ) համալսարաններում: Հատկապես կարեւոր է Եղյանի դերն աշխարհահռչակ հայագետ, բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի ճակատագրում: Դժվար է կռահել, թե ինչպես կդասավորվեր Ադոնցի ստեղծագործական կյանքը, եթե նրան իր հովանավորության ներքո չվերցներ Կ. Եղյանը:

1894 թվականին հաջողությամբ ավարտելով Թիֆլիսի ռուսական 2-րդ դասական գիմնազիան՝ Ադոնցի առջեւ ծառանում է բարձրագույն կրթություն ստանալու հարցը: Բայց ավելի ծանրը համապատասխան թոշակ ունենալու հարցն էր: Դա մի պատմաշրջան էր, երբ կովկասահայ մեծ ու փոքր հարուստներ, ընկերություններ, հաստատություններ տարված էին մի կարեւոր գաղափարով՝ սերունդ պատրաստել՝ հասարակական գործիչ, ուսուցիչ, քահանա, մտավորական: Բաքվի եւ Թիֆլիսի շատ մեծահարուստներ թոշակառու ուսանողներ ունեին ռուսական եւ արտասահմանյան համալսարաններում: Այդ բնագավառում հատկապես աչքի էր ընկնում ազգային անզուգական բարերար Ալեքսանդր Մանթաշյանը: Նա թոշակավորում էր միայն այն դեպքում, երբ որեւէ հասարակական ու մշակութային գործիչ երաշխավորում էր թոշակի թեկնածուին՝ հիմնավորելով, որ իր առաջադրած անձը ուսում ստանալու դեպքում կարող է պիտանի լինել ազգին ու եկեղեցուն: Երիտասարդ Ադոնցը, հնարավորություն չունենալով անձամբ դիմելու բարերարին, խնդրում է իր երբեմնի ուսումնակից, ապա ուսուցիչ, Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների տեսուչ Տիրայր վարդապետ Տեր-Հովհաննիսյանի (Տիգրան Մելիք-Մուշկամբարյան)[2] աջակցությունը: Ինքը՝ Տիրայր վարդապետը, Ադոնցին նվիրված իր

1 Կ. Եղյանի կյանքի, գործունեության, գիտական ժառանգության վերաբերյալ լույս տեսած հոդվածներից կառանձնացնենք Երվանդ Շահազիզի («Էջմիածին», 1946, օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 60-64, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 43-53), Ս. Բեհբուդյանի («Էջմիածին», 1987, Դ., էջ 52-57) եւ Հ. Հովհաննիսյանի («Պատմա-բանասիրական հանդես», 1998, թ. 1-2, էջ 95-104) հրապարակումները:

2 Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանը եղել է Հայոց Եկեղեցու նշանավոր գործիչներից, Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի առաջնորդական փոխանորդ, Մայր Աթոռի դիվանապետ, Հյուսիսային Ամերիկայի թեմի

անտիպ հուշերում այս մասին գրում է. «Մի օր Թիֆլիսից ստացա Ադոնցի հուսակտուր նամակը, որի մեջ արտահայտել էր յուր ջերմ ըղձանքը՝ միջնորդել Ալ. Մանթաշյանին, որ յուր թոշակավոր սաների շարքի մեջ առներ իրեն: Մանթաշյանի հետ հանդիպած էի մի երկու անգամ, սակայն կասկածելով, որ իմ միջնորդությունը կարող է օգտակար չլինել, դիմեցի Արգար Հովհաննիսյանին՝ խնդրելով նրա ազդեցությունը Մանթաշյանի վրա, որի մասին կասկած չունեի»[3]: Միջնորդությունը հաջողվում է, եւ Ադոնցը դառնում է Մանթաշյանի թոշակառու: Հատկանշական է, որ այդ օրերի թոշակառու ուսանողները ստանում էին միջինը 25 ռուբլի թոշակ, սակայն Տիրայր վարդապետի միջնորդությամբ Ադոնցին նշանակվում է 45 ռուբլի թոշակ, որով, ճիշտ է, հնարավոր չէր շռայլ լինել, բայց կարելի էր ապրել տանելի պայմաններում եւ գնել գրքեր:

1894 թ. աշնանը Ադոնցը ժամանում է Ս. Պետերբուրգ եւ ընդունվում Կայսերական համալսարանի Արեւելյան լեզուների բաժինը: Այս պահից սկսյալ Ադոնցի հովանավորությունը ստանձնում է Կարապետ Եզյանը, որը չափազանց օգտաշատ եղավ տաղանդավոր երիտասարդի գիտական հետաքրքրությունները ճիշտ ուղղորդելու գործում: Ուսումնառության տարիներին (1894-1899) Ադոնցը շարունակաբար հանդիպել է Եզյանին, որը նրան ներգրավել է Ս. Պետերբուրգի Հայ եկեղեցական խորհրդի աշխատանքների մեջ, տվել առանձին՝ համայնքային նշանակություն ունեցող հանձնարարություններ: Այդ հանդիպումներն ավելի սերտացրեցին նրանց հարաբերությունները:

1899 թ. Ադոնցն առաջին կարգի դիպլոմով ավարտում է համալսարանը: Նրա ավարտական աշխատանքը գնահատվում է «գերազանց», իսկ հեղինակը պարգեւատրվում է ոսկե մեդալով: Ստացած կրթությունը Ադոնցին թվում էր անբավարար, նույն կարծիքին էր նաեւ Եզյանը: Անհրաժեշտություն է առաջանում դարձյալ դիմելու Ալ. Մանթաշյանին: Այդ պարտականությունն իր վրա է վերցնում Եզյանը, որը 1899 թ. մայիսի 29-ին հատուկ նամակով դիմում է Մանթաշյանին եւ ներկայացնում իրողությունը.

«Մեծապատիւ

ազնիւ բարեկամ,

Ձեր որդեգիրներից այս տարի աւարտեց Նիկողայոս Ադոնցը: Թէ՛ նորա ուսանողական զբաղմունքները, եւ թէ՛ վերջին քննութիւնները ցոյց տուեցին, որ Ձեր խնամքները վայելել է մի արժանաւոր երիտասարդ, որի ապագա գործունէութիւնը հուսով եմ, արդիւնաւէտ է լինելու:

Այժմ, նորա պրոֆեսորները կարեւոր են համարում, որ Ադոնցը երկու-երեք տարով Եւրոպա անցկացնի՝ կատարելագործուելու իւր մասնագիտութեան մէջ:

Դուք, որ չէք խնայել նորանից ցարդ Ձեր խնամքը, մի՛ խնայեցէք եւ այժմ: Ուստի դիմում եմ Ձեզ, օգտուելով Ձեր՝ ինձ տուած իրաւունքից,

---

առաջնորդ: Նրա մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Նշանավոր ճեմարանականներ», պրակ 2, Ս. Էջմիածին, 2009, էջ 443-448:

3 **Տ. Հ. Տեր-Հովհաննիսյան** (Տիգրան Հովսեփի Մելիք-Մուշկամբարյան), Հուշեր Նիկողայոս Ադոնցի մասին, Չարենցի անվ. գրականության եւ արվեստի թանգարան, ֆ. 161, թ. 45 գ:

Կարապետ Եզյան

Նիկողայոս Ադոնց

եւ առաջարկում եմ կարգադրութիւն անել այդ մասին: Ձեզ լաւ յայտնի է, որ արտասահմանում ուսանող երիտասարդի ապրուստը աւելի թանկ է, ուստի եւ հարկաւոր կլինի ամսական մոտ 100 ռուբլի գումար, որի մէջ է մտնում ե՛ւ ուսման վարձը, ե՛ւ գրքերը: Բացի սորանից, Ադոնցը կարիք ունի սկզբնական ծախքերի համար դրամի՝ թէ՛ ճանապարհածախսի համար գործածելու եւ թէ՛ հագուստեղէն կարել տալու եւ մնացած պարտքերը վճարելու: Առ այս պարտք է առնուած երեք հարիւր ռուբլի:

Կ. Էզով»[4]:

Ալ. Մանթաշյանը առանց հապաղելու հայտնում է իր դրական որոշման մասին.

«Ի 7 յունիսի 1899 թ.

Մեծապատիւ եւ հարգելի Գերասիմ

Արտեմիչ ի Պետերբուրգ,

Ստանալով Ձեր 29 մայիսի նամակը՝ հէնց այս րոպէիս շտապում եմ Ձեզ պատասխանել:

Իմ արտասահմանու սաներուս տալիս եմ բոլորին 50 ռուբլի ամիսն, բայց որովհետեւ գտնում էք Դուք, որ Նիկողայոսն աւելի պէտք է ստանայ, ուրեմն դորան նշանակում եմ ամիսն 80 ռուբլի 2 տարի ժամանակով, որ իւր ուսումն վերջացնէ եւ վերադառնայ այդտեղ: Իսկ սկզբնական ծախքերուն համար նշանակեցի 400 ռուբլի: Նամակիս հետ ուղարկում եմ կարտոչկաս, Նիկողայոսն կերթայ եւ կստանայ Խոջաէյնաթեանից[5]*:*

Սիրելի Գերասիմ Արտեմիչ, խնդրեմ ներես, որ իմ սաներն Ձեզ այսքան գլխացաւութիւններ են տալիս եւ նամակներ են գրել տալիս Ձեզ ինձ մօտ»[6]:

Ունենալով Մանթաշյանի թոշակն ու վայելելով Կ. Եզյանի հովանավորությունը՝ 1899 թ. օգոստոսին Ադոնցը մեկնում է արտասահման: Եզյանի հետ նախապես պայմանավորված ծրագրի համաձայն՝ Ադոնցը նախ հաստատվում է Մյունխենում: Այստեղ նա հետեւում է նշանավոր բյուզանդագետ Կարլ Կրումբախերի դասընթացներին, կատարելագործում իր գերմաներենն ու հին հունարենը:

Ա. Մանթաշյանի Թիֆլիսի գրասենյակը 3 ամիսը մեկ կանոնավորապես Ադոնցին էր ուղարկում հասանելիք թոշակը (240 ռուբլի): Սակայն կեցության եւ ուսման ծախսերի թանկացման հետեւանքով այդ գումարն այլեւս չէր բավականացնում: Ադոնցը ստիպված էր 1900 թվականի համար Եզյանի միջնորդությամբ բարերարից խնդրել եւս լրացուցիչ 250 ռուբլի: Կ. Եզյանին ուղղված մայիսի 12-ի նամակում նա մանրամասն ներկայացնում

4 ՀՀԱԱ, Կ. Եզյանի թղթոն, ֆ. 58, ց. 2, գ. 1056, թ. 25 (միկրոֆիլմ):

5 Հավանաբար խոսքը Ս. Պետերբուրգում Մանթաշյանի գործակալ Ալեքսանդր Խոջա-Էյնաթովի մասին է:

6 ՀՀԱԱ, Կ. Եզյանի թղթոն, ֆ. 58, ց. 2, գ. 1056, թ. 22 (միկրոֆիլմ):

է իր անելանելի վիճակը՝ շեշտելով, որ թեեւ ինքը 80 ռուբլի թոշակ է ստանում, սակայն Մյունխենում կյանքն այնքան թանկ է, որ դա մոտավորապես Պետերբուրգի 30 ռուբլին է, եւ որ ինքը չի կարողանում շարունակել իր ուսումնառությունը. ունի պարտքեր եւ այդ պարտքերը մարելու համար իրեն անհրաժեշտ է եւս 250 ռուբլի[7]:

Ճիշտ ըմբռնելով Ադոնցի վիճակի ծանրությունը՝ Եզյանը նրա խնդրանքն անմիջապես ներկայացնում է Մանթաշյանին: Իր հերթին վերջինս էլ 1900 թ. մայիսի 26-ին անհապաղ պատասխանում է.

«Ամենայարգելի Գերասիմ Արտեմիչ,

Ձեր նամակն ստանալով՝ խնդրեցի Ադոնցին ուղարկեցի 250 ռուբլի»[8]:

Ադոնցի վիճակը կարգավորվեց եւ անգամ հնարավորություն ունեցավ զբաղվելու գիտական աշխատանքով: Այդ ժամանակ է, որ նա հեղինակեց բյուզանդագիտական իր առաջին, մեծ հետաքրքրություն ներկայացնող «Կասիա միանձնուհին եւ հայերը» ուսումնասիրությունը[9]:

1900 թ. հոկտեմբերին նա տեղափոխվում է Փարիզ: Այստեղ հետեւում է համբավավոր Շառլ Դիլի բյուզանդագիտական, Անտուան Մեյեի համեմատական լեզվագիտության, եւ Օգյուստ Կարիերի ասորերենի դասընթացներին, օրնիբուն պարապում է Ազգային գրադարանում, ծանոթանում այստեղ պահվող հայերեն գրչագրերին: Ծրագրի համաձայն՝ Ադոնցը Փարիզում պետք է մնար մինչեւ 1901 թ. աշունը, որից հետո անցնելու էր Անգլիա եւ մի քանի ամիս այնտեղ մնալուց հետո վերադառնալով Պետերբուրգ՝ 1902 թ. գարնանը ներկայացնելու էր մագիստրոսական աշխատանքը[10]: Սակայն տեղի ունեցավ անսպասելին, որն Ադոնցի բոլոր ծրագրերն ի չիք էր դարձնում:

1900 թ. դեկտեմբերի 31-ի նամակով Ադոնցը խնդրում է հետաձգել իր ուսամնառությունը եւս մեկ տարով: Հետեւաբար խնդրում է, որ Մանթաշյանը շարունակի ֆինանսավորել իր ուսումնառությունը[11]:

Կ. Եզյանն ստիպված էր դարձյալ միջնորդել, ու Մանթաշյանն էլ դարձյալ ընդառաջում է այդ միջնորդությանը եւ շարունակում ֆինանսավորել Ադոնցի արտասահմանյան ուսումնառությունը՝ ժամկետ սահմանելով մինչեւ 1902 թ. հունիսը: Հիանալի գիտակցելով Եզյանի նշանակալից դերը որպես գիտնականի իր կայացման գործում՝ Ադոնցը չի վարանում դա անվանել բախտավորություն, ճակատագիր, նախախնամություն: 1902 թ. մարտի 8-ին Լոնդոնից Եզյանին ուղղված նամակում երիտասարդ գիտնականը հավաստիացնում է. *«Հայտնում եմ վերստին շնորհակալություն եւ խնդրում հավաստի լինել, որ ուրիշ բան չունիմ աչքիս առաջ, եթե ոչ կոչմանս*

7 **Պ. Ն. Ռակորյան**, Նիկողայոս Ադոնցի նամակներից. «Լրաբեր», ՀԽՍՀ ԳԱ (հասարակ. գիտ.), 1975, թ 11, էջ 93-95:

8 ՀՀԱ, Կ. Եզյանի թղթոն, ֆ. 58, ց. 2, գ. 1056, թ. 23:

9 Տեմ «Հանդէս ամսօրեայ», 1901, թ. 5-6, էջ 129-132:

10 Աշխատանքի խորագիրը նախապես ձեւակերպված էր «Հայաստանի պատմությունն ու հայերի ճակատագիրը Բյուզանդիայում. Է-Ը դարեր», հետագայում խմբագրվեց որպես՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»:

11 **Պ. Ն. Ռակորյան**, նշվ. աշխ., էջ 100-101:

գիտակցությունն ու հավատարմությունը: Լիահույս եմ, որ պարտքերս կատարելու գործում Ձեր աջակցությունն ու քաղցրահայեցողությունը պիտի լինի ինձ զորեղ կռվան, որի համար կմնամ Ձեզ երախտագետ եւ միշտ անձնվեր

Ն. Ադոնց»[12]:

Ս. Պետերբուրգ վերադառնալուց անմիջապես հետո Ադոնցը մասնակցում է ուսումնական տարեվերջի քննություններին եւ մեծ հաջողությամբ հանձնում հայկական բանասիրության մագիստրոսի կոչում ստանալու քննությունները: Ֆակուլտետի գիտական խորհուրդը, ուսուցչապետ Ն. Մառի երաշխավորությամբ, առանձին որոշմամբ նրան ժամկետ է տալիս մինչեւ 1904 թ. վերջերը պաշտպանության ներկայացնելու մագիստրոսական թեզը: Այդ աշխատանքի հետ կապված բոլոր ծախսերը՝ թե գիտական, թե՛ տպագրական եւ թե՛ կենցաղային, իր վրա է վերցնում ֆակուլտետը: Իսկ Եզյանի հետ համագործակցությունը շարունակվում է Եկեղեցական խորհրդի շրջանակում, որի անդամ Ադոնցն ընտրվում է 1904 թ.՝ դարձյալ Եզյանի միջնորդությամբ: Բայց նրանց համագործակցությանը վիճակված չէր երկար շարունակվելու, քանզի 1905 թ. մայիսի 31-ին Եզյանը վախճանվեց:

Հետագա ամբողջ կյանքի ընթացքում Ադոնցը խորին երախտագիտությամբ ու պատկառանքով է վերաբերվել իր մեծ բարեկամի հիշատակին: Փարիզյան տարագրության շրջանում՝ 1927 թ. հունիսի 12-ին ելույթ ունենալով Սանասարյան վարժարանի շրջանավարտ սաների միության կազմակերպած երեկույթին՝ Ադոնցը առանձնակի ուշադրություն է հրավիրում Կարապետ Եզյանի գործունեության վրա՝ շեշտելով, թե նա «կարեւոր արժեք է եղած ռուսահայ իրականության մեջ, իբրեւ կրթական ու հանրային գործիչ»[13]: Իսկ 1928 թ. հունիսի 2-ին Կ. Եզյանի մահվան տարելիցի առթիվ Սանասարյան միության հրավիրած հիշատակի երեկոյին հանդես է գալիս ընդարձակ զեկուցումով, որտեղ հավուր պատշաճի է գնահատում Եզյանի վիթխարի դերը ԺԹ. դարի երկրորդ կեսի եւ Ի. դարի սկզբների հայ իրականության մեջ[14]:

1935 թ. լրանում է Եզյանի ծննդյան 100-ամյակը: Ն. Ադոնցը հոգու պարտք է համարում այդ առթիվ հանդես գալ հատուկ հոդվածով: Թերեւս տարակուսելի է հոդվածը ռուսերեն լեզվով գրելու հանգամանքը. հավանաբար այն նախատեսված է եղել ռուսալեզու մամուլում տպագրվելու համար: Հոդվածը, որի ինքնագիրը պահվում է Համազգային Բեյրութի գրական պահոցի պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցի ֆոնդում (պահարան I, զզրոց Է., թղթածրար Ա.-8, թթ. 1-12), հայերեն է թարգմանել Օ. Ս. Վարդազարյանը: Տպագրվում է առաջին անգամ:

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

12 Անդ, էջ 111:
13 «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1927, 16 հունիսի:
14 Անդ, 1928, 7 հունիսի:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

ԿԱՐԱՊԵՏ [ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ] ԵԶՈՎ (ԵԶՅԱՆ)

Կ. Հ. Եզովը[1] ծնվել է 1834 թ. սեպտեմբերի 5-ին Մոսկվայում: 1852 թ. ոսկե մեդալով ավարտել է Արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանը (Մոսկվա) եւ երկու տարի անց՝ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արեւելյան լեզուների ֆակուլտետը եւ արժանացել հայերենագիտության ամբիոնի մագիստրոսի գիտական կոչման[2]: Նրա հայրը Մոսկվայում մանր առեւտրական էր, որն ամուսնացած էր Նոր Նախիջեւանցի մի հայուհու՝ Կիստովայի հետ:

Կարապետ Եզովն ուներ երկու քույր՝ Մարիա եւ Աննա, եւ եղբայր՝ Իվան (Հովհաննես): Մարիան ամուսնացած էր իրենց հեռավոր ազգական Բ. Վ. Բողդանովի հետ: Նրանց երեխաներին Եզովը վերաբերվում էր իբրեւ իր սեփական երեխաների եւ մեծապես աջակցում նրանց ուսումնառությանը[3]: Նրա ջանքերի շնորհիվ այս ընտանիքի անդամները, չնայած ապրում էին Ս. Պետերբուրգում եւ կրթություն էին ստացել ռուսական ուսումնական հաստատություններում, սահուն խոսում էին հայերեն: Աննան մշտապես ապրում էր Կարապետ Եզովի հետ եւ վարում էր նրա տնտեսությունը: Նրանց եղբայրը՝ Հովհաննեսը, նույնպես ավարտել էր Արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որից հետո ընդունվել Ս. Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիան: Հովհաննեսի՝ ակադեմիան ավարտելուց հետո, չնայած նյութական միջոցների սղության, Կ. Եզովը նրան ուղարկել է արտասահման մասնագիտության մեջ կատարելագործվելու: Արտասահմանից վերադառնալով Ս. Պետերբուրգ՝ Հովհաննես Եզովն իր ոլորտում մեծ համբավ եւ հեղինակություն է ձեռք բերել, այնպես որ Պետերբուրգյան հայտնի բժիշկների կողմից հաճախ հրավիրվում էր խորհրդատվության: Որպես հատկանշական երեւույթ կարելի է նշել այն, որ նա հայերին բուժում էր անվճար:

1854 թ. նոյեմբերին Կ. Եզովը պետական ծառայության է ընդունվում Ս. Պետերբուրգի նահանգային վարչությունում, որտեղից շուտով տեղափոխվում է Ներքին գործոց նախարարության հոգեւոր գործերի

եւ օտար դավանությունների դեպարտամենտ: Այստեղ նա հասել է բաժնի պետի աստիճանի: 1888 թ. նշանակվել է Ժողովրդական կրթության նախարարության դեպարտամենտի փոխտնօրեն, իսկ 1891 թ.՝ Ժողովրդական կրթության Գլխավոր կոմիտեի եւ Գիտական խորհրդի անդամ: Զբաղեցրած պաշտոնների բերումով նա մշտապես հրավիրվել է Գիտությունների ակադեմիայի նիստերին, ուստի եւ անդամակցում էր բազմաթիվ գիտական ընկերությունների[4], այդ թվում՝ «Հին հուշարձանների ուսումնասիրության» հանձնաժողովին, որի նախագահն էր կոմս Ս. Դ. Շերեմետեւը: Պետական անբասիր ծառայության համար պարգեւատրվել է բազմաթիվ շքանշաններով, այդ թվում բարձրագույններից՝ «Սպիտակ արծվի Աստղ»-ով եւ հասել Պետական խսկական գաղտնի խորհրդականի ամենաբարձր կոչմանը: 1904 թ. Ժողովրդական կրթության նախարարության անդամները նշեցին նրա պետական ծառայության հիսունամյա հոբելյանը: Առաջին օրը Եզովը պաշտոնական շնորհավորանքներ էր ընդունում մի շարք բարձր աստիճանավորներից եւ զանազան կառավարական հաստատությունների պաշտոնյաներից: Հանդիսավոր շքահամազգեստով նրան շնորհավորելու եկան կոմս Վ. Ն. Կոկովցեւը (այդ ժամանակ ֆինանսների նախարար, հետագայում՝ վարչապետ), Ժողովրդական կրթության նախարար գեներալ-համհարզ Գլազովը, Արդարադատության փոխնախարար Շմեմանը, ծերակուտականներ Անիչկովը, Մամոնտովը եւ այլք, ինչպես եւ Ժողովրդական կրթության նախարարության ավագ պաշտոյաներն ամբողջ կազմով: Հոբելյանի երկրորդ օրը հատկացված էր Ս. Պետերբուրգի հայ համայնքի, բարեկամների եւ համակիրների շնորհավորանքներին: Դրանք սկսվեցին նրանից, որ Ստեփան Մամիկոնյանը[5] հանդիսավորությամբ ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկի կոնդակը, որում Եզովը նմանեցվում էր արծվի[6]: Այնուհետեւ ընթերցվեցին մի շարք ուղերձներ տարբեր հայաբնակ քաղաքների, ինչպես նաեւ շատ ջերմ եւ սրտառուչ՝ Մոսկվայի, հայկական համայնքներից:

Ավարտելով Կ. Եզովի պաշտոնական գործունեության վերաբերյալ սույն համառոտ ակնարկը, փորձենք ներկայացնել նաեւ նրա հասարակական եւ անձնական կյանքը: Հոր մահվանից հետո Կ. Եզովի ընտանիքը զրկվեց կենսամիջոցներից, եւ նա ստիպված եղավ հոգալ ամբողջ ընտանիքի կարիքները: Ընդունվելով պետական ծառայության՝ նա հար-

կադրված էր իր ընտանիքը Մոսկվայից տեղափոխել Ս. Պետերբուրգ: Բնակվելով Ս. Պետերբուրգում, նա մի պանսիոն բացեց, որը բացառապես հայորդիներին նախապատրաստում էր ինչպես միջնակարգ դպրոց (գիմնազիա), այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար: Նրա պանսիոնում կրթություն ստացած անձանցից հարկ է նշել Գրիգոր Արծրունուն, Աբգար Հովհաննիսյանին, Լեւոն Տիգրանյանին (Մկրտիչ Սանասարյանի ազգականին), Մադաթյանին եւ այլոց: Նրա աշակերտների մեջ կային այնպիսիները, որ հետագայում բարձրագույն պաշտոններ ստանձնեցին կառավարական տարբեր հիմնարկություններում: Օրինակ, հաղորդակցության ուղիների նախկին փոխնախարար Գրիգորի Բուդագովը[7]: Շաբաթ օրերին Եզովը հավաքում էր իր սաներին, որոնց հետ կապված էր բարեկամական ու ջերմ հարաբերություններով, եւ նրանց հասակակիցներին՝ ազգային կյանքի զանազան հարցերի քննարկման համար: Քննարկումները եւ բանավեճերն ընթանում էին բացառապես հայերենով: Դրանով էր բացատրվում իր պանսիոնն ավարտած երիտասարդների հայոց լեզվի հոյակապ իմացությունը՝ թեեւ նրանք բնակվում էին Ռուսաստանում: Այդ ժամանակվանից Եզովի անունը մեծ համբավ ձեռք բերեց հայերի շրջանում: Նրա շուրջը կազմավորվեց հայազգի գործիչների մի հիանալի խումբ՝ կոմս Միքայել Լորիս-Մելիքովը, պրոֆեսոր Քերովբե Պատկանովը, մեծահարուստներ Մկրտիչ Սանասարյանը[8], Հովսեփ Իզմիրյանցը[9] եւ այլք: Հետզհետե Եզովի բնակարանը վերածվեց մի կենտրոնի, ուր ձգտում էր Ս. Պետերբուրգ ժամանած ցանկացած հայ եւ ամեն ոք, որ ուներ որեւէ կարիք կամ խորհրդի անհրաժեշտություն, մշտապես դիմում էր նրան: Յուրաքանչյուր հայի Եզովը ընդունում էր ամենայն բարյացակամությամբ՝ անտեսելով նույնիսկ ճաշի կամ հանգստի ժամերը: Առանձնապես հատուկ ջերմությամբ էր ընդունում Հայաստանից եւ Կովկասից ժամանած հայ երիտասարդներին: Շնորհիվ իր բացառիկ հեղինակության, որ նա վայելում էր Ժողովրդական կրթության նախարարության ոլորտում, նա կարողանում էր բազմաթիվ երիտասարդ հայերի տեղավորել բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ, ի դեպ, շատ դժվար էր ընդունվել մեծ մրցակցության պատճառով: Սակայն մի պայման էր դրվում. որպեսզի Եզովը միջամտեր կամ մասնակցություն ունենար այս կամ այն հայ երիտասարդի ճակատագրին, այդ երիտասար-

դը պետք է պարտադիր տիրապետեր հայերենին: Հակառակ դեպքում նա մերժում էր աջակցության բոլոր խնդրանքները՝ խիստ նախատելով դիմողին մայրենի լեզվի չիմացության համար: Ինքը՝ Կ. Եզովը, Արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո, թեեւ հիանալի տիրապետում էր հայերենին, բայց իր գիտելիքները բավարար չէր համարում եւ արդեն հասուն տարիքում սկսեց ջանադրաբար ուսումնասիրել այն եւ հասավ կատարյալ իմացության: Եզովը միշտ ասում էր, թե բավական չէ լինել լավ մարդ, այլեւ պետք է լինել լավ հայ՝ սիրել իր ազգը եւ հայերի մեջ ամրապնդել ազգային ոգին: Ընդհանրապես հարկ է նշել, որ Եզովի բնակարանը միշտ բաց էր հայերի համար եւ յուրաքանչյուրը օգտվում էր ոչ միայն նրա հյուրընկալությունից, այլեւ, եթե կարիքը կար, որեւէ պետական հաստատություն ծառայության ընդունվելու համար՝ նրա աջակցությունից: Հատկապես նրա բնակարանը մարդաշատ էր պահքի ավարտին, Սուրբ Ծննդի եւ Զատիկի նախօրեին, երբ նրան այցելում էին ոչ միայն անձամբ իր հետ ծանոթ ուսանողներ, այլեւ նրանց ընկերներն ու մտերիմները, որոնցից շատերին Եզովը առաջին անգամ էր տեսնում[10]:

Այժմ անցնենք նրա եւ նրա մերձավոր բարեկամների միջեւ հաստատված հարաբերություններին: Երբ 1878 թ., ռուս-թուրքական պատերազմից քիչ առաջ կոմս Մ. Լորիս-Մելիքովը եկավ Ս. Պետերբուրգ, Եզովի անձի մասին նրա ականջին հասան ամենահիացական կարծիքներ: Ուստի նա ցանկություն հայտնեց ծանոթանալու նրա հետ, իսկ հետագայում այնքան մտերմացավ, որ պատերազմի նախօրեին որոշեց ընտանիքը Վիսբադենից տեղափոխել Ս. Պետերբուրգ եւ ռազմական գործողությունների սկսվելուց հետո այն վստահեց Եզովի հոգածությանը: Այդ ժամանակվանից Եզովը դառնում է ինչպես իր իսկ՝ կոմս Լորիս-Մելիքովի, այնպես էլ նրա ամբողջ ընտանիքի ամենամերձավոր բարեկամը: Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Եզովը մշտապես եւ անկաշկանդ այցելում էր կոմս Լորիս-Մելիքովին, որը, լինելով Ալեքսանդր II կայսեր օրոք Գերագույն կարգադրիչ Հանձնաժողովի նախագահ՝ դիկտատորական իրավասություններով (պաշտոն, որը չի գբաղեցրել եւ ոչ մի պետական գործիչ ո՛չ նրանից առաջ, եւ ո՛չ էլ հետո), Եզովին իրազեկ էր դարձնում պետական բոլոր գաղտնիքներին եւ գործերին: Այսպես, օրինակ, մի սովորական այցելության ժամանակ կոմսը թվարկել էր այն

նախարարների անունները, որոնք պետք է պաշտոնանկ արվեին: Իսկ երբ 1881 թ. Ալեքսանդր II-ը սպանվեց, Եզովը ամբողջ օր ու գիշեր անցկացրեց Լորիս-Մելիքովի հետ, որը, հույժ ցնցված լինելով այդ իրողությամբ, կարիք ուներ այնպիսի մտերիմ մարդու ներկայության, ինչպիսին էր Կ. Եզովը:

Կ. Եզովը մտերիմ էր հատկապես Մկրտիչ Սանասարյանի հետ: Մ. Սանասարյանը, ռուսական բանակի նախկին սպան, թեեւ բարձրագույն կրթություն չէր ստացել, բայց ի ծնե խելացի էր, ինչը նրան հնարավորություն տվեց տարբեր մասնավոր ընկերություններում զբաղեցնելու տնօրենի պաշտոն[11]: Դրա շնորհիվ նրան հաջողվեց իր համեմատաբար համեստ դրամագլուխը հասցնել պատկառելի կապիտալի: Մ. Սանասարյանը ոչ միայն հարգում էր Եզովին, այլեւ շատ նվիրված էր նրան, եւ նույնիսկ աստվածացնում էր: Ցանկացած մտահղացում, որ Եզովն առաջարկում էր նրան, Սանասարյանն ընդունում էր դրանք՝ բարեհաջող արդյունքի ակնկալությամբ: Հետաքրքիր է, որ նա որեւիցե քայլ չէր ձեռնարկում, մինչեւ չստանար Եզովի հավանությունը: Եւ Կ. Եզովն օգտվելով իր մեծագույն ազդեցությունից՝ նրան ներշնչել էր այն միտքը, որ պետք է դրամագլուխ կտակել դեռ կենդանության օրոք, եւ ոչ թե մահվանից հետո, քանի որ միայն այդ դեպքում նվիրատուն կկարողանար ուրախությամբ հետեւել հաջող ընթացքին այն գործի, որի համար նա նվիրաբերել էր իր դրամական միջոցները: Դրանով է գլխավորապես բացատրվում այն, որ ի կենդանության Սանասարյանը նվիրաբերել է իր դրամագլուխը Էրզրումում (Կարին) հայկական վարժարան հիմնելու համար[12], որն իր պատվին կոչվեց «Սանասարյան»[13]: Այդ վարժարանի հիմնադրումը բացառապես Կ. Եզովի նախաձեռնությունն էր. նրան էր պատկանում նաեւ ուսումնական հաստատությունը հենց Տաճկահայաստանում հիմնադրելու գաղափարը: Եզովը միանգամայն համոզված էր, որ ինչքան էլ հայերը հալածված լինեին թուրքերի կողմից, պետք է ամեն գնով նրանց մեջ վառ պահել հայկական ոգին: Իսկ ամենից լավ դա կարող էր անել միայն դպրոցը: Մ. Սանասարյանի համաձայնությամբ Եզովը հրավիրեց վաստակավոր անձանց, որոնք համալրեցին այդ վարժարանի ուսուցչական կազմը. մինչ օրս կենդանի Գեւորգ Աբուլյանին, Հովսեփ Մադաթյանին, Սարգիս Սողիկյանին (այժմ մահացած) եւ էլի ուրիշների: Իր նախաձեռնությամբ այս անձինք ուղարկվեցին

Գերմանիա ուսումնական գործի կազմակերպումն ուսումնասիրելու եւ կրթությունը շարունակելու համար: Եզովին էր պատկանում նաեւ այն միտքը, որ Սանասարյան վարժարանում պետք է դասավանդվեն զանազան արհեստներ ու արվեստներ, քանի որ Հայաստանը մեծ կարիք ուներ տարբեր արհեստների ու արվեստների գիտակ մասնագետների: Այսպիսով, այս գործի կազմակերպչական կողմը հոգում էր Եզովը, եւ Սանասարյանը չէր միջամտում, քանի որ լիովին վստահում էր նրան: Դժվար է պատկերացնել ավելի սրտառուչ եւ հայրական վերաբերմունք, քան այն, որ Եզովը դրսեւորում էր Սանասարյան վարժարանի նկատմամբ, եւ որը կարելի է համեմատել ամենասիրված երեխայի նկատմամբ ծնողական զգացմունքների հետ: Հետագա ամբողջ կյանքի ընթացքում Եզովն ամենայն ուշադրությամբ հետեւում էր այդ վարժարանի աշխատանքներին: Կարինից նրան ուղարկում էին հաշվետվություններ, որոնք անձամբ ինքն էր ուսումնասիրում՝ դրանց վրա հաճախ անցկացնելով ամբողջ գիշերներ: Յուրաքանչյուր հարուստ հայի, որ ժամանում էր Ս. Պետերբուրգ, նա ասում էր. «Ահա՛ մի գործ, որին պետք է աջակցել, եւ որի համար հարկ է դրամ հատկացնել»: Անձամբ Եզովը համոզեց իր այրի մորաքրոջը՝ Նոր Նախիջեւանցի Կազաչկովային [Մարիամ Կազաչկյանց], որ իր պատկառելի դրամագլուխը կտակի Սանասարյան վարժարանին, չնայած նրան, որ իրենց ընդհանուր ազգականները նույնպես դրամի խիստ կարիք ունեին: Համաձայն Սանասարյանի թողած կտակի, կտակարար էր նշանակվել Կ. Եզովը, իսկ նրա մահվանից հետո Սանասարյան վարժարանի տնօրինությունը պետք է անցներ հատուկ հոգաբարձու խորհուրդին՝ Կ. Պոլսի պատրիարքի (այդ ժամանակ՝ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի) նախագահությամբ: Հոգաբարձու խորհուրդը կազմված էր վեց անդամներից եւ երեք թեկնածուներից, ընդ որում նախագահի փոխանորդն այստեղ Օսմանյան կայսրության պետական բարձր աստիճանավոր Գաբրիել Նորատունկյանն էր: Կ. Եզովի մերձավոր բարեկամների թվին էր պատկանում մեծ հայրենասեր եւ բարեգործ Հովսեփ Աբրահամի Իզմիրյանցը: Եզովի նախաձեռնությամբ ամեն կիրակի պատարագից հետո Իզմիրյանցի մոտ էին հավաքվում հայկական համայնքի մեծավորները՝ ազգային եւ քաղաքական կյանքի զանազան հարցեր քննարկելու համար: Կ. Եզովի խորհրդով Հ. Իզմիրյանցը 12.000 ոսկի ռուբլու դրամագլուխ կտակեց այն պայմանով, որ

այդ գումարից ստացած տոկոսն իբրեւ մրցանակ տրվի լեզվաբանության եւ գրականության հարցերին նվիրված, հայերենով շարադրված լավագույն երկասիրության համար[14]: Այդ դրամագլխի տնօրինությունը եւ պարգեւատրությունների շնորհումը վստահված էր հատուկ հոգաբարձու խորհրդի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի նախագահությամբ: Նշվածներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ Եզովը տաճկահայերի նկատմամբ հատուկ վերաբերմունք ուներ, եւ, ինչպես կարելի էր հասկանալ իր իսկ խոսքերից, այս ամենն արվում էր նրա համար, որպեսզի նրանց մոտ վառ պահվեր հայոց լեզուն եւ հայրենասիրական ոգին: Նա շատ էր հուզվում եւ սրտին մոտ ընդունում Տաճկահայաստանում կատարվող յուրաքանչյուր դժբախտություն:

Երբ 1890-ական թվականներին Տաճկահայաստանում տեղի ունեցավ Սասունի առաջին կոտորածը, Եզովն անմիջապես արձագանքեց այդ աղետին: Այն ժամանակվա ռուս լավագույն կատարողների մասնակցությամբ նա մայրաքաղաքում ճոխ համերգ կազմակերպեց: Համերգից հավաքված հասույթը կազմեց մի պատկառելի գումար, որն անմիջապես ուղարկվեց կոտորածից տուժածներին օգնության: Այդ պահից ի վեր նա սկսեց հետեւել Տաճկահայաստանում կատարվող իրադարձություններին եւ բոլոր աղետները, որ տեղի էին ունենում այնտեղ, ընդունում էր խորը վշտով եւ ձեռնարկում էր այս կամ այն միջոցառումն արեւմտահայերին օգնելու համար: Սակայն սրանով բնավ չի սահմանափակվում Եզովի հասարակական գործունեությունը: Նա վիթխարի ազդեցություն ուներ ինչպես հայոց ազգային, այնպես էլ քաղաքական եւ ամբողջ հոգեւոր կյանքի վրա: Եզովը ծավալուն նամակագրություն է վարել իր օրերի բոլոր Ամենայն Հայոց կաթողիկոսների հետ, սկսած Գեւորգ Դ.-ից մինչեւ Խրիմյան Հայրիկը: Բացի այդ, Եզովը նամակագրություն ուներ Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանյանի եւ այլ երեւելի արքեպիսկոպոսների, այդ թվում Գաբրիել Այվազովսկու եւ այլոց հետ: Էջմիածնի [Գեւորգյան] ճեմարանի հիմնարկեքի կապակցությամբ հատուկ նամակագրություն է ունեցել Գեւորգ Դ.-ի հետ, որի կազմակերպմանը նա գործուն մասնակցություն է ունեցել: Այս նամակագրությունն ամբողջությամբ պահպանվել եւ այժմ գտնվում է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայում՝ պրոֆեսոր Նիկողայոս Մառի հսկողության ներքո:

Երբ ռուսական կառավարության կարգադրությամբ Թիֆլիսում փակվեցին հայկական ուսումնական հաստատությունները՝ այն է Ներսիսյան դպրոցը եւ Անանյան վարժարանը, Եզովի համառ ու հետեւողական միջնորդության շնորհիվ որոշ ժամանակ անց դրանք դարձյալ վերաբացվեցին[15]: 1900-ական թվականների սկզբին՝ 1903 թ., երբ Կովկասի փոխարքա Գր. Գոլիցինի օրոք ռուսական կառավարությունը բռնագրավեց Կովկասի հայկական եկեղեցիներին եւ վանքերին պատկանող գույքը, գլխավորապես Եզովի երկարատեւ եւ համառ գործունեության շնորհիվ, որ ծավալվում էր Ս. Պետերբուրգում կառավարության ազդեցիկ անդամների միջնորդությամբ, հաջողվեց հասնել նրան, որ խլված գույքը ետ վերադարձվեց: Այս իրողությունը շատ քչերին է հայտնի:

Վերջապես, հարկ է նշել նաեւ այն կարեւոր փաստը, որ վիթխարի նշանակություն ուներ Ս. Պետերբուրգի եւ Մոսկվայի հայերի համար: Բանն այն է, որ Ս. Պետերբուրգի եւ Մոսկվայի հայկական եկեղեցիները կառուցվել են Լազարյանների կողմից՝ այն Լազարյանների, որոնք Մոսկվայում հիմնեցին Արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանը: Եւ քանի որ իշխան Սիմեոն Աբամելիք-Լազարյանն ամուսնացած էր Լազարյանների տոհմի մի աղջկա հետ, ապա Ս. Պետերբուրգի եւ Մոսկվայի հայկական եկեղեցական գույքը բացառապես տնօրինում էր Աբամելիք-Լազարյանների ընտանիքը, իսկ ծխականներին, հակառակ նրան, ինչ ընդունված էր այլ քաղաքներում, արգելվում էր մասնակցել դրանց կառավարմանը: Սակայն երկարատեւ ջանքեր թափելուց հետո Եզովին հաջողվեց հասնել նրան, որ այս եկեղեցիների կառավարումն ստանձնեցին ծխականները: Այդ ժամանակ մշակված եւ օրենքով ամրագրված կարգով ընդունվեց մի հատուկ դրույթ Մոսկվայի եւ Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների մասին, որի համաձայն՝ վերոհիշյալ եկեղեցիների գույքն ու եկամուտները պետք է տնօրիներ հատուկ եկեղեցական խորհուրդը, որի նախագահ դարձավ իշխան Ս. Աբամելիք-Լազարյանը, որն իր տեղակալին նշանակում էր ծխականներից: Երկար ժամանակ այդպիսի տեղակալ, եւ, ըստ էության, գործնականում նախագահն էր Եզովը: Նրա նախաձեռնությամբ է, որ բացի Լազարյան թոշակից, Լազարյան ճեմարանում հիմնվեցին նաեւ մի շարք նոր թոշակներ, որոնք շնորհվում էին Ս. Պետերբուրգի Հայկական եկեղեցական խորհրդի կողմից[16]:

Ավարտելով, մնում է ասել, որ չնայած նրան, որ Եզովն ստիպված էր

զգալի ժամանակ հատկացնել ծառայողական ու համայնքային պարտականություններին, նա ժամանակ էր գտնում զբաղվելու նաեւ ազգային պատմությանը վերաբերող զանազան ուսումնասիրություններով: Այդ բնագավառում նա ունի աշխատությունների մի ամբողջ շարք, որոնցից մի քանիսը հրատարակվել են, իսկ մյուսները մնացել են անտիպ[17]: Վերջիններս պահպանվում են նույն այն նամակագրության հետ, որը, ինչպես վերը նշվեց, գտնվում է Լենինգրադում, Գիտությունների ակադեմիայում: Վերջին՝ հույժ ստվարածավալ աշխատությունը, որը պարունակում է բազմաթիվ արժեքավոր վավերագրեր, հրատարակվել է «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» վերտառությամբ. [Փաստաթղթեր քաղված Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարության Մոսկվայի Գլխավոր եւ Ս. Պետերբուրգի արխիվներից, Ավստրիական արքունական եւ պետական արխիվներից, Բավարական թագավորական գաղտնի պետական արխիվից եւ այլ հիմնարկությունների արխիվներից (Ս. Պետերբուրգ, 1898)]: Այս գիրքը Եզովն անձամբ է ընծայել նախկին կայսր Նիկոլայ II-ին, որպեսզի, ինչպես ինքն էր ասում. «Նիկոլայ II-ը իմանար, թե իր նախորդները ինչպիսի բարյացակամությամբ էին վերաբերվում հայ ժողովրդին»[18]:

Կարապետ Եզովը վախճանվեց 1905 թ. [մայիսի 31-ին] 70 տարեկան հասակում, կրծքահեղձուկից [ստենոկարդիա]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում՝ «Г. А. Езов = Герасим Артемевич» թարգմանությունում անվանաձեւն ամենուր դարձրել ենք Կարապետ Հարությունի:

2. Որոշ ժամանակ Եղյանն ստանձնել է նաեւ հայոց լեզվի ամբիոնի վարիչի պարտականությունները:

3. Հավանաբար նրանց դուստրերն էին այն Մանուշակ եւ Շուշանիկ Բողդանյան քույրերը, որոնք Եղյանի գիտական ղեկավարությամբ հրատարակության էին պատրաստել ԺԹ. դարի ռուսական 248 անուն թերթերում եւ ամսագրերում տպագրված հայերին եւ Հայաստանին վերաբերող հոդվածների մատենագիտական մի ցանկ (2586 միավոր): Ցավոք, չափազանց արժեքավոր այդ աշխատանքի հետագա ճակատագիրն անհայտ է: Միայն ստույգ է, որ Կ. Եղյանը փորձել է այն տպագրել Էջմիածնում, սակայն ապարդյուն [տե՛ս **Յուրի Վարդանյան**, Մեսրոպ Տեր-Մովսիսյանի նամակները Կարապետ Եղյանին. «Լրաբեր» (հասարակ. գիտ.), 1977, թ. 10, էջ 98, 100]: Այս մատենագիտական ցանկի մասին տե՛ս նաեւ «Известия Императорской Академии наук», СПб., 1916. հմմտ. «Армянский вестник», М., 1916, թ. 22, էջ 17:

4. Որպես պատմաբան-արեւելագետ՝ Եզովը լայն ճանաչում ուներ Ռուսաստանում: Արեւելագետների միջազգային գիտաժողովներում նա հաճախ էր ներկայացնում ռուսական արեւելագիտությունը եւ հանդես գալիս գիտական զեկուցումներով: Եւ պատահական չէ, որ նա ռուսական եւ եւրոպական արեւելագիտական մի շարք ընկերությունների անդամ էր:

5. Ստեփան Մամիկոնյան (1859-1921) - ռուսահայ նշանավոր հասարակական ու մշակութային գործիչ, իրավաբան: Հեղինակ է Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ:

6. Տե՛ս տեղեկատվությունը՝ «Կոնդակ օրհնութեան Կարապետ Եզեանցի 50-ամեայ յոբելեանի առթիւ». «Արարատ», 1904, էջ 919:

7. Գրիգորի Բուդագով (1852-1921) - ճարտարագետ, կամրջաշինարար, պետական գաղտնի խորհրդական, Ռուսական կայսրության երկաթուղային հաղորդակցության փոխնախարար:

8. Մկրտիչ Սանասարյան (1818-1890) - մեծատուն, ազգային բարերար: Նրա տրամադրած դրամական միջոցներով են բացվել Վանի Մարիամյան օրիորդաց վարժարանը, Վանի նահանգի Խարակոնիս, Նուխի գավառի Նիժ եւ Վարդաշեն գյուղերի դպրոցները, Կարինի Սանասարյան կրթարանը, աջակցել է Գեորգյան ճեմարանի հիմնադրմանը:

9. Հովսեփ Իզմիրյանց (1817-1883) - մեծատուն, ազգային բարերար: Պարբերաբար նվիրատվություններ է կատարել ազգային ամենատարբեր հաստատությունների՝ եկեղեցուն, դպրոցին, մասնավորապես Գեորգյան ճեմարանին: Հայոց լեզվի եւ պատմության լավագույն աշխատությունների համար սահմանել է դրամական պատկառելի մրցանակ (տե՛ս «Արարատ» 1875, էջ 114-115, 149-153, 1880, էջ 40-41, 1881, էջ 332 եւ այլն): Հովսեփ Իզմիրյանցի կրակի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Կ. Եղյանց**, Յովսէփ Իզմիրեանցի կրակը եւ նրա կատարումը. «Արարատ», 1889, էջ 661-668:

10. Պանսիոնի սաներից Ալ. Երիցյանը վկայում է, որ Ս. Պետերբուրգի հայ երիտասարդներին միավորողը եւ ուղղություն տվողը Կ. Եղյանի ընտանիքն էր. «Եզեանցի մայրը եւ քոյրը իրենց

սիրալիր եւ գթասիրաբար ընդունելութիւններով շատերին մոռացնել էին տուել ընտանիքի եւ բարեկամների կարօտը: Այստեղ շատերն են օգնութիւն ստացել, ստիպուել եւ միսիթարուել, այստեղ շատերն են բարի խորհուրդներ լսել եւ պաշտպանութիւն գտել: Վերջապէս այստեղ շատերն են սովորել ճանաչել իրենց պարտականութիւնները դէպի ընկերը, դէպի ընտանիքը, հայրենիքը եւ հասարակութիւնը: Եւ ահա պարոն Եզեանի տունը դարձել էր մի գրաւիչ կենտրոն մայրաքաղաքի հայ ուսանողութեան համար» [տե՛ս **Աղ. Երիցեանց**, Գրիգոր Արծրունու եւ նրա քանը հինգ տարուայ գրական գործունէութեան առիթով (1865-1890), Թիֆլիս, 1890, էջ 52. հմմտ. **Վլ. Բ. Բարխուդարյան,** Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես - XX դարի սկիզբ), Երեւան, 2010, էջ 168-169]:

11. Մկրտիչ Սանասանյանը եղել է Ս. Պետերբուրգի շոգենավային ընկերության տնօրենների խորհրդի անդամ, երկար տարիներ ղեկավարել «Վոլգա -Կասպից ծով -Դարսկաստան շոգենավային հաղորդակցության ընկերություն»-ը եւ այլն:

12. Դպրոցի կանոնավոր գործառման համար Սանասարյանը կտակել է նաեւ «268.428 ռուբլու տոկոսաբեր արժեթղթեր, որոնք բորսային գներով այն ժամանակ կազմում էին մոտավորապես 345.000 ռուբլի» (տե՛ս «Մշակ», 1890, 8 նոյեմբերի, թ. 102): Բացի այդ, «Նա թողել է 202.894 ռուբլու ոչ ժամկետանց եւ 52.391 ռուբլու ժամկետանց պարտամուրհակներ» (տե՛ս **Երվանդ Շահազիզ,** Կարապետ Եզյան, Մկրտիչ Սանասարյան, Լեւոն Տիգրանյան. «Էջմիածին», 1946, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 47): Եզյանի խորհրդով Սանասարյանը Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանին 2000 ռուբլի է տրամադրել վարժարանի համար կալվածք գնելու (տե՛ս «Արարատ», 1904, էջ 919): Ինքը՝ Եզյանը, Սանասարյան վարժարանին է կտակել 40.000 ոսկի ռուբլի եւ իր ճոխ գրադարանը: Սանասարյան վարժարանին նվիրաբերված կտակների մասին տե՛ս. «Ա. Հիմնական կանոնադրութիւն Սանասարեան վարժարանի: Բ. Կտակագիր Մկրտիչ Սանասարեանցի: Գ. Կտակագիր տիկին Մարիամ Մարտիրոսեան Կազաչկեանցի: Կտակագիր բարեյիշատակ Կարապետ Եզեանցի», Կ. Պոլիս, 1910:

13. Սանասարյան դպրոցն իր պարապմունքներն սկսել է 1881 թ. հոկտեմբերի 1-ին: Ուսման տեւողությունը 9 տարի էր, կից գործում էր երկու տարվա ծրագրով ուսուցիչների վերապատրաստման դասընթաց:

14. Խոսքը Սահակ-Մեսրոպյան գրական մրցանակաբաշխության մասին է:

15. Ցարական կառավարությունը հայկական դպրոցները փակել է երկու անգամ՝ 1885 թ. սկզբին (մոտ 300 դպրոց) եւ 1896 թ. հունվարին (230 դպրոց):

16. Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդի, նրա եկամուտների ու ծախսերի, դերի եւ նշանակության մասին մանրամասն տե՛ս Վլ. Բ. Բարխուդարյանի նշվ. աշխ., էջ 65-100:

17. Կ. Եզյանի երկասիրությունների վերաբերյալ մատենագիտական ցանկեր չկան: Այստեղ ներկայացնում ենք նրա՝ մեզ հայտնի աշխատությունների համառոտ մատենագիտությունը.

1. «Об учении персидских магов. Сочинение Езника, армянского писателя V в.», տե՛ս «Журнал Министерства народного просвещания:, 1858, N 1, январь, їз 247-287, N 4, апрель, էջ 15-32. տե՛ս նաեւ առանձին գրքով (СПб., 1859):

2. «Об изучении в Европе армянского языка, истории и литературы», տե՛ս «Современник:, 1858, т. 68, отдел II, էջ 257-264:

3. «Армянская журналистика в Росии», տե՛ս «Современник», 1858, т. 70, отдел II, էջ 135-136:

4. «Внутренный быт древней Армении:, СПб., 1859.

5. «Ներքին կեանք հին Հայաստանի: Դատմբանական քննութիւն», ռուսերէն բնագրից թարգմանեց Պերճ Պռոշեանը, Շուշի, 1864:

6. «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. Ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884:

7. «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծն վարդապետի Հայոց», առաջաբանը (80 էջ), Ս. Պետերբուրգ, 1887:

8. «Յովսէփ Իզմիրեանցի կրակը եւ նորա կատարումը». տե՛ս «Արարատ», 1889, էջ 661-668:

9. «Եւրոպական լեզուներով գրուած գրքեր եւ յօդուածներ հայերի եւ Հայաստանի մասին». տե՛ս «Հանդէս գրական եւ պատմական», Մոսկուա, 1890, գիրք 3, էջ 1-14 (յաւելուած):

10. «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», առաջաբանը (81 էջ), Ս. Պետերբուրգ, 1891:

11. Aperçu de l'étude de la langue arménienne en Europe (Actes du 8—Congrès Inter. des Orientalistes. Partie 3, sect .2, fasc. 1) Leide, 1892.

12. «Сношения Петра Великого с Армянским народом: Документы, առաջաբանը (150 էջ), СПб., 1898.

13. «Начало сношения Эчмиадзинского патриаршего перестола с русским правительством. Историческое исследование по неизданным документам». տե՛ս «Кавказский вестник:, Тифлис, 1901, թ. 10. տե՛ս նույնը առանձին գրքով (Тифлис, 1901):

14. «Ս. Էջմիածնի Մայր Աթոռի եւ ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը». տե՛ս «Լումայ», Թիֆլիս, 1904, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 5, էջ 5-24, թ. 6, էջ 23-43. տե՛ս նույնը առանձին գրքով (Թիֆլիս, 1904):

Կ. Եզյանի պատմագիտական ժառանգության ընդհանուր բնութագիրը տե՛ս **Ն. Ժ. Հովհաննիսյան**, Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն. XIX դար), Երեւան, 2004, էջ 327-353:

18. Որպես բնաբան Եզյանն ընտրել է Պետրոս Մեծի՝ առ հայ ժողովուրդը հայտնի ուղերձի հետեւյալ հատվածը.

«...понеже Мы оной Армянской народъ въ
особливую Нашу Императорскую милость
и протекцію приняли»
Ноября 10 дня 1724 г.
ПЕТРЪ».